ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Ուսումնական կենտրոն

Ուսումնական ծրագիր
նախնական մասնագիտական կրթության «Ոստիկան» որակավորման
« Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը»
առարկայի դասընթացի

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
ուսումնական կենտրոնի «Ընդհանուր
պատրաստականություն» կրթաճյուղի
01.06.2018թ-ի թիվ 4 նիստում

Ք.Երևան
2018թ.

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

Նախնական մասնագիտական կրթության «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» առարկայի եռամսյա դասընթացի

թեմայի հ/հ	Թեմայի անվանումը	ժամաքանակը ըստ թեմաների	ժամաքանակը ըստ պարապմունքի ձևերի		
			դասախոս	Գործն	Սեմի-նար
1	Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցության կազմակերպման ոլորտում առաջավոր սկզբունքների ձևավորումը:	2	2	-	
2	էթիկայի նորմերի պահպանումը և գործունեության հրապարակայնությունը, որպես բնակչության շրջանում ոստիկանության ծառայողների հանդեպ վստահության ձևավորման նախապայման:	4	2	-	2
3	Համայնքային ոստիկանության ընդհանուր նկարագրությունը : ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը:	2	2	-	
4	Համայնքի բնակիչների դերակատարությունը համայնքային ոստիկանության գործունեության մեջ:	4	2	-	2
5	Ոստիկանությունը և զանգվածային լրատվության միջոցները:	4	2		2
6	Ոստիկանության գործունեության հսկողությունը և վերահսկողությունը:	4	2	-	2
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	**20**	**12**	**-**	**8**

Կազմեց՝
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ

_____ Ս.Ե.Իսունց

Քննարկվել և հաստատվել է
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի նիստում արձանագրություն թիվ 4 01.06.2018
կրթաճյուղի պետ ոստ. փոխգնդապետ

_____ Ա.Ալեքսանյան

1. Դասընթացի ընդհանուր ծավալը ըստ պարապմունքի տեսակների

Ուսումնական պլանին համապատասխան առարկայի դասընթացի ուսումնասիրման համար հատկացված է 20 ժամ, որից՝

- դասախոսություն - 12 ժամ,
- գործնական - 0 ժամ,
- սեմինար - 8 ժամ:

2. «Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցությունը» առարկայի ուսուցման նպատակը և խնդիրները

Առարկայի հիմնական նպատակն է՝ սովորողների մոտ ձևավորել ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ արդյունավետ հարաբերություններ կառուցելու, իրավախախտումների դեմ մղվող պայքարում բնակչությանը ներգրավելու գործնական կարողություններ: Դասավանդման ընթացքում լուծվում են մասնագիտական ուսուցման հետևյալ խնդիրները՝

1. Տեսական գիտելիքներ հաղորդել ժողովրդավարական ոստիկանության սկզբունքների և ոստիկանության հանդեպ հարգանքի, վստահության և հասարակական աջակցության ձեռք բերման գործում դրանց նշանակության վերաբերյալ:
2. Մշակել սպասարկվող տարածքի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկ-ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունք դրսևորելուն ուղղված ունակություններ:
3. Գնահատել տեղեկատվության ընկալման առանձնահատկությունները, ձևավորել քննադատական մտածողություն դրսևորելու ունակություններ:
4. Ձևավորել ժամանակը արդյունավետ կառավարելու, խնդիրներ լուծելու մասնագիտական կարողություններ և հմտություններ:

3. Դասընթացի բովանդակության յուրացման մակարդակին ներկայացվող պահանջները.

Դասընթացի ավարտից հետո սովորողը պետք է կարողանա՝

1. ներկայացնել ժողովրդավարական ոստիկանության սկզբունքները և դրանց նշանակությունը ոստիկանության հանդեպ հարգանքի, վստահության և հասարակական աջակցության ձեռքբերման գործում.
2. հասարակության անդամների հետ շփվելիս դրսևորել բարեկիրթ վերաբերմունք.
3. գնահատել տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը.
4. վերլուծել պրոբլեմներ և տալ ճիշտ լուծումներ:

4. Կապը ուսումնական պլանով նախատեսված այլ առարկաների հետ

Դասընթացը սերտորեն կապված է ուսումնական պլանով նախատեսված այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են՝ «Մարդու իրավունքները և ոստիկանությունը», «Հաղորդակցման հմտությունները» և «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության ծառայողի գործունեության մեջ»:

5. Դասընթացի ուսուցման մեթոդական ցուցումներ

Ուսուցումը իրականացվում է դասախոսությունների, և սեմինարների տեսքով՝ լայնորեն կիրառելով ուսուցման ինտերակտիվ մեթոդները /«մտքերի տարափ», «զրույց», «բանավեճ» և այլն/: Պրակտիկ վարժությունների, իրավիճակային խնդիր-առաջադրանքների և դերախաղերի միջոցով սովորողների մոտ ձևավորվում են գործնական անհրաժեշտ հմտություններ և ունակություններ, որոնք տեսական գիտելիքներով ամրապնդվելով՝ դառնում են առաջիկա արդյունավետ մասնագիտական գործունեության կարևոր պայման:

6. Ուսումնական նյութի բովանդակությունը

<u>Թեմա-1</u> Ոստիկանության և հասարակության փոխհամագործակցության կազմակերպման ոլորտում առաջավոր սկզբունքների ձևավորումը

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. Ոստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը.
2. Ժողովրդավարական ոստիկանության գործունեության սկզբունքները.
3. «Ոստիկանանական ուժ» և «ոստիկանական ծառայություն» հասկացություններն ու դրանց էությունը.
4. Ոստիկանական գործունեության «արձագանքող» և «նախաձեռնող» մոտեցումները և դրանց էությունը.

<u>Թեմա-2</u> էթիկայի նորմերի պահպանումը և գործունեության հրապարակայնությունը, որպես բնակչության շրջանում ոստիկանության ծառայողների հանդեպ վստահության ձևավորման նախապայման

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. էթիկայի հասկացությունը.
2. էթիկայի նորմերի գերակայության պարտադիր լինելը ոստիկանի վարքագծում.
3. Բարոյական բարձր արժեքների համակարգը.
4. «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի» դրույթները, որպես ծառայողական վարքագծի ուղեցույց:

<u>Թեմա-3</u> Համայնքային ոստիկանության ընդհանուր նկարագրությունը: Հայաստանի Հանրապետության ոստիկանության Համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը:

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. Ոստիկանության գործունեության ոճերը /ավանդական ոստիկանություն և խնդրամետ ոստիկանություն/.
2. Համայնքային ոստիկանությունը՝ որպես ավանդական և խնդրամետ ոստիկանության գործունեության ռազմավարական լրացում.
3. Համայնքային ոստիկանության գործունեության առանձնահատկությունները.

4. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության Համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգի» ընդհանուր դրույթները.
5. Համայնքային ոստիկանության գործունեության նպատակները.
6. Համայնքային ոստիկանության գործունեության հրապարակայնությունը և գնահատումը:

<u>Թեմա-4</u> Համայնքի բնակիչների դերակատարությունը համայնքային ոստիկանության գործունեության մեջ:

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. Համայնքի ուսումնասիրում.
2. Համայնքային ոստիկանության համագործակցությունը հասարակության, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.
3. Համայնքային խորհրդի գործունեության նպատակները.
4. Քաղաքացիների մասնակցության դրական արդյունքները.
5. Խնդիրների լուծման գործընթացը /SARA մոդելը/ :

<u>Թեմա-5</u> Ոստիկանությունը և զանգվածային լրատվության միջոցները

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. Ոստիկանության գործունեության հրապարակայնության սկզբունքը.
2. ԶԼՄ-ների հետ համագործակցությունը, որպես ոստիկանության գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման երաշխիք.
3. Ոստիկանության ծառայողների համար ԶԼՄ-ների հետ շփվելու ուղեցույցի դրույթները.
4. Ոստիկանության ծառայողի պարտականությունները լրագրողների հետ փոխհարաբերություններում.
5. ԶԼՄ-ներին տեղեկատվություն տրամադրելիս ոստիկանության ծառայողի ներկայանալու կարգը և տրամադրված տեղեկատվության հակիրճ բովանդակությունը:

<u>Թեմա-6</u> Ոստիկանության գործունեության հսկողությունը և վերահսկողությունը

Թեմայի շրջանակում ուսումնասիրվող հարցերը՝

1. Ոստիկանության գործունեության նկատմամբ արտաքին վերահսկողությունը.
2. Ներգերատեսչական հսկողությունը ոստիկանությունում.
3. Ոստիկանության գործունեության հսկողությունը /դատախազական/.
4. Ոստիկանության ծառայողի պատասխանատվությունը:

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն 1995թ.
2. ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին» 2001թ.
3. ՀՀ օրենքը «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002թ.
4. ՀՀ օրենքը «ՀՀ Ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» 2005թ.
5. «Ոստիկանություն-հասարակություն գործընկերության հաստատման լավագույն փորձը» ԵԱՀԿ Վիեննա 2008թ.
6. «Ժողովրդավարական ոստիկանության ուղեցույց-ձեռնարկ» ԵԱՀԿ Վիեննա 2006թ.
7. «Ոստիկանության ծառայողների բազային վերապատրաստման լավագույն փորձը. Ուսումնական պլանի ասպեկտները» ԵԱՀԿ Վիեննա 2008թ.
8. «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագիրք» ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեա 17.12.1979թ. թիվ 34/169 բանաձև
9. Հովհ. Քոչարյան «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը /պարզաբանումներ/ Երևան 2002թ.
10. «ՀՀ ոստիկանության ծառայողների համար ԶԼՄ-ների հետ շփվելու ուղեցույց» ՀՀ Ոստիկանության պետի 18.03.2011թ. թիվ 535-Ա հրաման.
11. «ՀՀ կառավարության 2014թ նոյեմբերի 6-ի թիվ 1254-ն որոշում «ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին»:
12. «Համայնքային ոստիկանության հենակետին ներկայացվող պահանջները, հենակետում աշխատանքի կազմակերպման, համայնքային ոստիկանության ծառայողների կողմից անձանց հաշվառման, փաստաթղթերի ձևերը և դրանց վարման կարգը» ՀՀ ոստիկանության պետի 13.01.2015թ. թիվ 11-Ա հրաման:
13. « ՀՀ Ոստիկանության Համայնքային ոստիկանության ծառայության կանոնադրություն» ՀՀ Ոստիկանության պետի 02.12.2011թ. թիվ 3535-Ա հրաման.

«Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար ուղեցույց» Երևան 2012թ.: